Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մարտի 1-ի N 77 - Ա
որոշման

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
«ՕՐՐԱՆ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակները	Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին և ծերերին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին, միայնակ ու կարիքավոր ծերերին
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը
3.	Բարեգործը (բարեգործները)	ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ (Մեծ Բրիտանիա), «Հույսի կամուրջ» ՀԿ, Յիրիկյանների ընտանիք, Հակոբ Բարսեղյան
4.	Ծրագրի կատարողը	«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն ՀՎՀՀ՝ 02552842 Հասցե՝ Առաջին Եկմալյան 6 Երևան, Հայաստանի Հանրապետություն Հեռ.՝ 53-51-67
5.	Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը	Հայաստանի Հանրապետություն՝ Երևան Սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 121,032,231 (հարյուր քսանմեկ միլիոն երեսուներկու հազար երկու հարյուր երեսունմեկ) դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագիրը սկսել է գործել 2000 թ. ապրիլի 19-ից, 16 երեխաներով և 27 ծերերով: Այժմ ծրագրում ներգրավված են՝

		• 6-16 տարեկան 120 երեխա, որոնք ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ է, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունի. • 60 թոշակառուներ՝ 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, որոնք անտուն են և մուրում են փողոցում, միայնակ են, ամուսնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն: Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկա-վարժները, հոգեբանը, բուժքույրը և գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Երևանի տարբեր վարչական շրջանների սոցիալական բաժինների, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչություն հետ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը սկսվել է 2000 թ. ապրիլին, և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2019 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ:
9.	Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է, առանձնաց-նել) նկարագրությունը և ժամկետ-ները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Օրրան» ԲՀԿ-ն Առաջին Եկմալյան 6 հասցեում գտնվող իր եռահարկ կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ և ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 120 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ և իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական և բժշկական ծառայություն: Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է մատուցում 60 միայնակ, կարիքավոր ծերերի և հաշմանդամների: • 120 երեխայի և 60 թոշակառուի ամենօրյա սնունդ: Տարեկան կազմում է 43,403,791 դրամ (մթերքի ձեռքբերում՝ 33,500,000 դրամ, խոհանոցային սարքավորումներ և պարագաներ՝ 1,800,000 դրամ, վարձատրություն խոհանոցի աշխատողներին (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի)՝ 8,103,791 դրամ), • բժշկական և հոգեբանական ծառայություններ՝ տարեկան 2,500,004 դրամ (բժշկական-սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաներ՝ 200,000 դրամ, բուժքրոջ և հոգեբանի վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի)՝ 2,300,004 դրամ),

		• սոցիալական ծառայություն, հագուստ և կոշիկ՝ տարեկան 4,433,326 դրամ (հագուստի և կոշիկի ձեռքբերում՝ 3,200,000 դրամ, սոցաշխատողի վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի)՝ 1,233,326 դրամ), • մշակութային միջոցառումներ՝ տարեկան 11,424,687 դրամ (ամառային ճամբար, այցելություն Ձրաշխարհ, թատրոն, կինո՝ 7,440,000 դրամ, մշակութային աշխատողների վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի)՝ 3,984,687 դրամ), • դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում՝ դպրոցից հետո, շաբաթական 6 օր, 120 երեխայի համար, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, և ձեռարվեստական հինգ կենտրոններում ուսուցում (փայտամշակում, կար ու ձև, կավագործություն, նկարչություն, բացիկների պատրաստում), տարեկան՝ 17,244,163 դրամ (դպրոցական գրենական պիտույքներ, պայուսակներ՝ համակարգիչներ 2,700, 000 դրամ, նյութեր՝ ձեռարվեստական հինգ կենտրոնի համար՝ 1,700,000 դրամ, վարձատրություն ՝ ուսուցիչներն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի)՝ 12,844,163 դրամ), • արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկված հագուստ, գրենական պիտույքներ, խաղալիք, սպորտային ապրանք)՝ տարեկան 1,000,000 դրամ, • նվիրատվություն՝ - ծայրաստիճան կարիքավոր 60 ընտանիքների էլեկտրաէներգիայի և 3 ընտանիքների բնակարանի վարձի վճարում՝ տարեկան 5,500,000 դրամ. - 90 երեխաների ամենօրյա երթևեկության ծախսեր՝ տարեկան 5,616,000 դրամ. - 8 սաների՝ ըստ նախասիրության (երաժշտություն, արհեստներ, շախմատ և այլն) ուսման վարձերի վճարում՝ տարեկան 1,260,000 դրամ, • «Արմենիա» հյուրանոցային համալիր» ՓԲԸ՝ միջոցառում դրամական միջոցների հայթայթման նպատակով՝ 4,500,000 դրամ, • Բուկլետների և թերթերի տպագրություն՝ 1,500,000 դրամ, • Տեսախցիկներ ձեռքբերում և տեղադրում՝ 400000 դրամ:

				Ընդամենը ՝ 98,781,971 դրամ (ինսունութ միլիոն յոթ հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր յոթանասունմեկ), Կազմակերպական ծախսերը՝ 22,250,260 դրամ, ընդամենը ծրագրի բյուջեն՝ 121,032,231 դրամ:			
10.	Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքների, ծառայություն-ների և աշխա-տանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	N	Ամսա-թիվ	Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը	Կազմակերպու-թյան կամ մատակարարի անվանումը	Նկարագրությունը	ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ
		1.	17.06.04	N010309530 51/3162/4682	«Վեոն Արմենիա» ՀՁ ՓԲԸ	Հեռախոսակապի մատակարարում	1,600,000
		2.	22.08.17	N 07-0012-6-1	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	Խմելու ջրի մատակարարում	300,000
		3.	20.03.18	N-8263135	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	էլեկտրաէներգիայի մատակարարում	1,800,000
		4.			«Արսեն Խալաթյան» ԱՁ	Հացի ձեռքբերում	3,000,000
		5.	01.12.15	Պայմանագիր N 012.12.15.0546	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	Գազի մատակարարում	3,200,000
		6.				Արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների կողմից ուղարկվող նվերներ)	1,000,000
		7.	18.12.18	Ե-243	«Էյ-Ի-ՋԻ-Սերվիս» ՍՊԸ	Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայության մատուցում	69,718
		8.	20.12.18	AT-AU-089-18	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ	Տարեկան ֆինանսական աուդիտի ծառայության մատուցում	1,500,000

		9.	18.12.17	Պայմանագիր AR 181217/1	«ՍԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Մթերքի ձեռքբերում	28,000,000
		10.				Համակարգչի, պրինտերի ձեռքբերում	1,200,000
		11.				փոստային ծախսեր	180,000
		12.				գրասենյակային ծախսեր	1,800,000
		13.	28.04.17	Պայմանագիր N 945	«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	Գազի կաթսայի տեխնիկական զննման ծառայության մատուցում	68,180
		14.			«Վալենսիա» ՀՁ ՍՊԸ	Երեխաների այցելություն Ջրաշխարհ (90 *6000դր)	540,000
		15.			«Ռիպա առողջարան» ՍՊԸ	Երեխաների հանգիստ «Ռիպա» առողջարանում (70եր*7 օր*10000 դր)	4,900,000
		16.	16.12.10	74556	«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ	Հեռախոս. կապի մատակարարում	1,200,000
		17.	11.12.15	1/12-15	«Ֆարինի» ՍՊԸ	Թխվածքաբլիթների, զաթայի ձեռքբերում	1,200,000
		18.				Դպրոցական պայուսակներ, գրենական պիտույքներ	1,500,000
		19.	10.12.18	Պայմանագիր 180/18,	«Ֆլեշ» ՍՊԸ	Բենզինի ձեռքբերում	2,700,000

		20.	20.12.18	Պայմանագիր 1316719	«Արմենիա» հյուրանոցային համալիր» ՓԲԸ	Միջոցառում՝ դրամական միջոցների հայթայթման նպատակով	4,500,000
		21.			«Կրոմա զրուպ» ՍՊԸ	խոհանոցային պարագաների ձեռքբերում	800,000
		22.				խոհանոցային սարքավորումների ձեռքբերում	1,000,000
		23.	20.12.18	Պայմանագիր N 20-18	«Անահիտ Գրիգորյան» ԱՁ	Տորթերի ձեռքբերում՝ երեխաների տարեդարձները նշելու համար	700,000
		24.			«Նաիրա Աղավելյան» ԱՁ	Սենդվիչի ձեռքբերում	600,000
		25.				Տեսախցիկների ձեռքբերում	400,000
		26.				Կոշիկի, հագուստի ձեռքբերում	3,200,000
		27.				ձեռարվեստական հինգ կենտրոնի համար նյութերի ձեռքբերում	1,700,000
		28.				բժշկական-սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաներ	200,000
		29.				մշակութային միջոցառումներ՝ այցելություն մշակութային հաստատություններ, նյութերի ձեռքբերում	2,000,000
		30.	20.12.18	Պայմանագիր N 5-18	«Տիգրան Մեծ» ՓԲԸ	Բուկլետների և թերթերի տպագրություն	1,500,000
				Ընդամենը			**72,357,898**

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի , «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի , «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ. • գազ՝ տարեկան՝ 3,200,000 դրամ, • գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում՝ 69718 դրամ, • ջուր՝ 300,000 դրամ, • էլեկտրաէներգիա՝ 1,800,000 դրամ, • հեռախոս՝ 2,800,000 դրամ, • գրասենյակային ծախսեր՝ 1,800,000 դրամ, • ֆինանսական աուդիտ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից՝ 1,500,000 դրամ, • փոստային ծախսեր՝ 180,000 դրամ, • բենզինի ծախսեր՝ 2,700,000 դրամ, • տեխնիկական անվտանգություն՝ 68,180 դրամ, • աշխատավարձ վարչական աշխատողներին (ադմինիստրատոր, հաշվապահ, վարորդ)՝ 7832362 դրամ: Ընդամենը՝ 22,250,260 (քսաներկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար երկու հարյուր վաթսուն) դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակա-ռավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	1. Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողով 2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 3. ՀՀ առողջապահության նախարարություն 4. ՀՀ կրթության և գիտության նախարարություն 5. Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների սոցիալական վարչություններ

		6. Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ 7. ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչություն Օրրանը համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ-ների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	• ՀՀ կառավարություն 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին. • ամսական և եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին. • գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ-ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով. • ամսական հաշվետվություններ՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե. • ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ